

Ո՞նց դիմացաւ սիրտդ Սօւէ՛ անմարդկային ցաւերին,
քո կրծքի տակ վեհ Նեմրո՞ւթն էր,
թէ՞ հաւատքը մեր վերին:

Դու՞ փակեցիր աչքերը լոյս քո Սերոբի դիւցազուն,
չ'պատռուէ՞ց սիրտդ արդեօք, չ'անիծեցի՞ր Աստծուն:
Եւ ի՞նչ ուժ էր, որ քեզ պահեց քաջակորով աննկուն,
ասա, ինչպէ՞ս չ'խենթացար, երբ մորթեցին քո որդուն:

Եւ ապրեցիր քո մէջ սեղմած վշտի գետերը վարար,
ֆիդայուհու քո զօրութեամբ հայոց ազգին եղար մայր:

Վիշտդ ծով էր, բայց քո կեանքը դարձաւ ոգու
յաղթանակ,

գուրգուրեցիր հայ որբերին, եւ քո սերն էր անհատակ:
Այս աշխարհում զէնքը մնաց հաւատարիմ քեզ ընկեր
եւ ողբի տեղ դու երգեցիր մարտնչելու օրօրներ:

Քո կրծքի տակ, Սօւէ մայրիկ,

վեհ Նեմրութն է հառաչում,

դու զինավառ աստուածուհի մեր լուսաբաղձ
պայքարում:

Վարուժան Խաստուր



ՍՈՍԵ ՄԱՅՐԻԿ

ՄՈՍԵ ՄԱՅՐԻԿ

Մոսե Մայրիկը (Մոսե Վարդանյան) (1865-1952) հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ է, Աղբյուր Սերոբի կինը: Ծնվել է 1865թ. Սոխորդ գյուղում (Խլաթ գավառ, Տուրուբերան նահանգ, Արևմտյան Հայաստան):


13 տարեկանում ամուսնացել է Խչենց Սերոբի՝ ապագա նշանավոր ֆիդայի Սերոբ Աղբյուրի հետ: 1890-ականերին Սերոբը պանդխտության է մեկնում, իսկ Մոսեն Հակոբ զավակի հետ մնում է գյուղում: 1895թ., երբ Սերոբը վերադառնում է Խլաթ և սկսում քարոզել «Տղաք, առանց հացի մնացեք, առանց զենքի մի մնաք», Մոսեն նրա կողքին էր: Ֆիդայիների սկզբունքներից մեկն էր չամուսնանալ, իսկ նախապես ամուսնացած լինելու պարագայում՝ հեռու մնալ ընտանիքներից:

Սակայն, Մոսեն մնացել է ամուսնու հետ: 1899թ. Սերոբի թաքստոցն էր Գելիեզուզան գյուղը: Մի դավաճան մատնում է Սերոբին և նրա ծխախոտի մեջ թույն դնելով՝ թունավորում: Երբ թուրքերը պաշարում են գյուղը, Սերոբն այնքան տկար էր, որ ոտքի վրա չէր կարող մնալ:

Մոսեն ամուսնուն թևանցուկ գյուղից հանում է դուրս՝ դեպի մոտակա լեռը: Կնոջ օգնությամբ Սերոբն ութ ժամ անընդմեջ մարտնչում է թշնամու դեմ:

Երբ թուրքական գնդակից զոհվում է Սերոբը՝ Մոսեն անմիջապես նրա ձեռքից վերցնում է հրացանը և շարունակում կռվել: Այս մարտում զոհվում է նաև Մոսեի և Սերոբի անդրանիկ որդին՝ Հակոբը: Մոսեն շարունակել է կռիվը: Անհավասար մարտում թուրքերին հաջողվեց գրավել լեռնալանջը, կտրել անկենդան Սերոբի գլուխը և որպես ավար՝ տանել իրենց հետ: Գրեթե անկենդան Մոսեին թուրքերը նետեցին Բաղեշի բանտ:

Ազատվելուց հետո Մոսեն անցնում է Կովկաս, ապա՝ Պոլիս և վերջապես հաստատվում Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, որտեղ 1952թ. վախճանվում է: 1990-ականերին նրա աճյունը տեղափոխվել և հողին է հանձնվել Եռաբլուրում: Մոսե Մայրիկի մասին ժողովուրդը երգեր է հյուսել:



Փառանձեմ թագուհու վերջին
ճակատամարտը,



ՓԱՌԱՆՁԵՄ ԹԱԳՈՒՅԻ

Փառանձեմ Սյունի (նաև **Փառանձեմ թագուհի**, 4-րդ դար, Սյունիք - 369), Մեծ Հայքի թագուհի, Տիկնանց Տիկին, Գնել Արշակունու, ապա Մեծ Հայքի Արշակ Բ արքայի երրորդ կինը, Սյունյաց նահապետ և հայոց սպարապետ Անդովկ Սյունու դուստրը, մորական կողմից Մամիկոնյանների նախարարական տոհմից, Պապ

թագավորի մայրը, Սյունիների նախարարական տոհմից: Փառանձեմ թագուհու կերպարը հակասական կերպար է. ոմանց համար նա հերոս էր ու արժանավայել թագուհի, ոմանց համար՝ դևերին ծախված չար կախարհ: Ոմանց համար նա օրինակ էր առաքինության, հայրենասիրության ու նվիրվածության, ոմանց համար՝ անբարո կին: Անկախ այլախոհ գնահատանքներից՝ Փառանձեմ թագուհին նվիրյալն էր իր երկրի, իր ազգի և պետության:

Փառանձեմը հայոց թագուհի օծվեց, երբ ամուսնացավ հայոց թերևս ամենահերոսական, բայց միաժամանակ ամենաղժբախտ ու ողբերգական կյանքով ապրած թագավորի՝ Արշակ Բ-ի (350-368) հետ: Նա միշտ հայոց արքայի կողքին էր նրա հայրենանվեր բոլոր նախաձեռնություններում:

Փառանձեմը Սյունյաց աշխարհից էր. Սյունյաց անառիկ լեռների պես հպարտ ու աննվաճ: Նա դուստրն էր Անդովկ իշխանի: Անդովկ Սյունին 4-րդ դարում հայոց ամենահզոր իշխաններից էր:

Անդովկ Սյունու գեղեցկադեմ դուստրը՝ Փառանձեմը, հարկ էր, որ արքայական տան հարս լինի, և Սյունյաց իշխանն իր դստերը կնության տվեց Տիրան Արշակունի արքայի (338-350) որդուն՝ Գնելին: Գնելը, որ Հայաստանում հռոմամետ իշխանների պարագլուխն էր Ներսես Պարթևի կաթողիկոսի հետ միասին, դիվային ծրագիր հղացավ՝ ապստամբել հայոց արքայի դեմ: Եվ Արշակը չհապաղեց հանուն իր երկրի ու գահի ապահովության հեղել ազգակցի արյունը: Պատմիչները գրում են, որ Գնելին Արշակի մոտ դավել է նրա հորեղբորորդին՝ Տիրիթը, նախանձից և Փառանձեմի սիրուց դրդված... Գնելի թաղման ժամանակ տեսնելով վշտացյալ Փառանձեմին՝ Արշակը սիրահարվեց և շատ չանցած՝ կին առավ նրան: Փառանձեմ թագուհին՝ հայոց հպարտությունը, Սյունյաց աշխարհի զարդը, ողբերգական մահ ունեցավ: Շապուհ պարսիկը նրան անպատիվ մահով սպանեց: Նա իր հրապարակում կապեց հայոց թագուհուն և իր բանակի թափթփուկներին հրամայեց սպանել նրան անասնական պիղծ խառնակությամբ... Սյունյաց ոստանում՝ Բաղաբերդում, աղբյուր կա՝ Փառանձեմի աղբյուրը: Մինչ օրս հայոց մայրերը խմում են այդ աղբյուրի ջուրը, որպեսզի իրենց պտուղն առողջ ու հայրենանվեր լինի: Մայրերն իրենց աղջիկների երեսը լվանում են այդ ջրով, որպեսզի նրանք Փառանձեմի նման գեղեցիկ և տոկուն լինեն:

... Այս պատերազմում
քաջությամբ աչքի ընկավ
մի կին. պարսպի վրա, որ
ետ էր մղում
թշնամհներին... առ ոչինչ
համարելով նետերի
խոցվածքները... և նրա
անունը իր
արագաշարժությանը
վայել՝ Այծյամն էր կոչվում:

Անցան տարիներ...
Հայ ժողովուրդը չմոռացավ
իր հայրենասեր, գեղանի
դսուերը՝ Ածեմնիկին:

ԱՅԾԵՄՆԻԿ

(Անի մայրաքաղաքի պահապանը)





Այծեմնիկ, խիզախ հայուհի

Նշանավոր դարբին Մլեհի դուստրն էր նա:

Այծեմնիկը սիրում էր հոր պատրաստած զենքերով զինված շրջել հայրենի բնաշխարհում: Սակայն նրա նետերից ոչ մի թռչուն ու կենդանի չէր վնասվում: Ավելին, Այծեմնիկին տեսնելով՝ մոտ էին գալիս համեղ մի պատառ ստանալու կամ մի բուռ հատիկ կտցելու:

Շուտով Այծեմնիկի շուրջը հավաքվեցին ավագանու մի խումբ աղջիկներ, նրանից զինավարժության դասեր առնելու: Աղջիկները Այծեմնիկից սովորում էին նետաձգություն և նիզակամարտի, սրամարտելու արվեստ: Սակայն նրանց զվարթ ժամանցը մի օր հանկարծակի ընդհատվեց:

Նրանց անցած ճանապարհին ամեն ինչ հրո ճարակ էր դառնում, ավերվում ու ոչնչանում: Անխիդ՝ վայրագությամբ թաթարներն սպանում էին ծերերին, կանանց ու երեխաներին, ավերում ու թալանում շեներն ու քաղաքները: Թշնամին շտապում էր Անի:

Թաթարական արյունարբու ոհմակները մոտեցան Անիին ու շրջապատեցին այն: Գազազած թշնամին վճռական մարտի նետեց իր բոլոր ուժերը օգնության հասած թարմ զորքերի հետ: Կովի ծանր պահին միջնաբերդի վրա հայտնվեց Այծեմնիկն՝ աղջիկների իր ջոկատով: Սկզբում նրանք վիրակապում, զենք էին հասցնում հայ ռազմիկներին:

Տեսնելով, որ քաղաքի պաշտպանների շարքերը խիստ նվազել են, աղջիկները Այծեմնիկի կոչով նետվեցին կովի մեջ: Այծեմնիկի ջոկատը մարտնչում էր պաշտպան հայ ռազմիկների հետ հավասար քաջությամբ:

Մոռացած ցավ ու մահ, Այծեմնիկը իր մարմնից հանում է թշնամու նետերն ու դրանք արձակում նրանց վրա:

Գլխից ու իրանից մի քանի վերք ստացած Այծեմնիկը մահացու հարված հասցրեց ևս մի թշնամու:

Նրա ուժերն սպառվում էին: Նա դանդաղ, պաշտպանվելով մոտեցավ պարսպի եզրին: Թշնամիները տեսնելով, որ վիրավոր հայ գեղեցկուհի-ռազմիկը ուժասպառ է, որոշեցին կենդանի գերել նրան և դուրս հանեցին օղապարանները: Զգալով վերահաս վտանգը՝ անարգ ու արյունարբու թշնամու ձեռքը չընկնելու համար, Այծեմնիկը ցած նետվեց բարձրաբերձ պարսպից:



Նուարդի հայոց թագուհու և ասորաց
թագուհի Շամիրամի հանդիպումը

Նվարդ (Նուարդ)
թագուհի



Հայ մատենագրության մեջ գրառված Առաջին Հայկյանների շարքում միակն Արա Գեղեցիկն է, որի կինը վկայված է անվանապես: Պատմահոր մատյանում նա հիշատակվում է իբրև Արա Գեղեցիկի «սիրելի կին», որի անունը Նվարդ (Նուարդ) էր:

Արա Գեղեցիկին հարավում իշխող Շամիրամն առաջարկում է իր ձեռքը և թագավորությունը: Արան չի համաձայնում Շամիրամի առաջարկությանը՝ հավատարիմ մնալով իր կնոջը: Շամիրամը վիրավորված, բայց նաև նրան սիրահարված՝ դիմում է պատերազմի և գրավում նրա երկիրը՝ Այրարատը: Պատերազմում զոհվում է Արան:

Այնուհետև Շամիրամը կառուցում է մեծ ամրոց՝ Վանաբերդը, որը կոչվում է Շամիրամակերտ: Նա կատարում է բազում նշանավոր գործեր՝ թողնելով արձանագրություններ դրանց մասին: Նա Արա Գեղեցիկի և Նվարդի որդուն՝ Կարդոսին դարձնում է Հայաստանի կառավարիչ:

Նվարդ Թագուհու կերպարը պատմության մեջ

Նվարդը ներկայացվում է որպես նվիրված, հպարտ և ազնիվ կին, որը մարմնավորում է հայկական ընտանիքի և հայրենիքի պաշտպանությունն ու հավատարմությունը:

Նվարդի կերպարը հաճախ ներկայացվում է որպես հայ կնոջ բարոյականության, նվիրվածության և սիրո խորհրդանիշ: Նա ոչ միայն հիասքանչ արտաքին ուներ, այլև անսահման ուժեղ ոգի, որը նրան դարձնում է ազգային հիշողության կարևոր մասը:

Նվարդը՝ որպես ազգի հպարտության խորհրդանիշ

Նրա կերպարը հաճախ զուգահեռվում է հայոց պատմության մեջ հիշատակված մյուս հզոր կանանց հետ, որոնք ոչ միայն իշխել են, այլև իրենց կյանքով ու գործունեությամբ պաշտպանել են հայրենիքը: Նվարդի հավատարմությունը Արա Գեղեցիկին և իր ժողովրդի հանդեպ հայ ժողովրդի համար դարձել է սիրո և հայրենասիրության վառ օրինակ:

Այսօր Նվարդ Թագուհու անունը հաճախ հիշատակվում է հայ մշակույթում, գրականության մեջ և ազգային պատմական ժառանգության շրջանակներում՝ որպես հայ կնոջ հավերժական կերպար:

Նվարդ թագուհին Հայոց պատմության մեջ հիշվում է որպես խոհեմ, արժանապատիվ և ուժեղ կին, որը կարողացավ պահպանել թագավորական պատիվը քաղաքական լարվածության ու վտանգավոր ժամանակների ընթացքում: